

Սուրբ Գրոց Մերտողութիւն : Դաս Թիւ 191

Գործնական օրինապաշտութիւն – Թէպէտ միս ուտելն կամ չուտելը, եւ որոշ օրերի պահելն կամ չպահելը այլեւս խնդիրներ չեն որոնց առթիւ հաւատացեալներ վիճում են այս օրերում, սակայն կան այսօրերս գործնական օրինապաշտութեան շատ ուրիշ ձեւեր եկեղեցիներում՝ կապուած հարցերին կամ արարքներին որոնք ուղղակիօրէն չեն նկատուում Աստուծաշնչում, որոնք յառաջացնում են խզում եւ անմիաբանութիւն հաւատացեալների միջեւ, ժխտականօրէն ազդելով նրանց սրբութեանը աճը, եւ ի վերջոյ բերելով անպատութիւն Աստծուն: Հետեւեալն են որոշ աւելի քննարկուած կէտերը:

Մազի երկարութիւն – Հատուածը որը սովորաբար գործածուում է մազի երկարութեան վերաբերեալ Ա. Կորնթացիս 11:2-16ն է, ուր գրուած է որ մի կնկայ երկար մազերը փառք է նրան եւ որ երկար մազերը անարգանք է մարդուն: Այս հատուածը մի շատ դժար (բարդ) հատուած է տարբեր մեկնաբանութիւններով. սակայն, ըստ մեկնաբանների մեծամասնութիւնը Պօղոսը չի ուսուցանում մի համաշխարհային ու մշտական աստուծաշնչային սկզբունք այլ ակնարկում է մի յատուկ մշակութային պարագայ: Թւում է որ առաջին դարուայ Կորնթական համայնքում, տղամարդիկ ու կանայք աւերում էին կամ շփոթեցնում էին արական-իգական սեռային տարբերութիւնները: Այս անելով եւ ըստ այդ յատուկ մշակութային, նրանք Աստծոյ կարգադրուած հեղինակութեան ու հնազանդութեան դերերի դէմ ըմբոստանում էին: Գլուխ ծածկելը կամ չծածկելը, ունենալ երկար կամ կարճ մազեր բարոյական հարցեր չէին՝ այսինքն, դրանք իրենք իրենցով մեղսալի չէին. փոխարէն, գլխաւոր ու անփոփոխելի սկզբունքը Աստծոյ հաստատուած արական-իգական դերերն էր, որն ի գօրու է բոլոր ժամանակներում, եւ բոլոր տեղերում՝ ինչպէս յարմարութեամբ արտայայտուած իւրաքանչիւր համայնքում:

Ալքոհոլական խմիչքներ – Կան խիստ անհամաձայնութիւններ Քրիստոնեաների միջեւ՝ թէ արդեօք մի հաւատացեալ կարող է խմել ալքոհոլական խմիչքներ թէ ոչ, կամ արդեօք հարկ է գործածել գինի որպէս Հաղորդութեան արարողութեան մաս: Նոյնիսկ տեսնում ենք որոշ եկեղեցիներ ու ծառայութիւններ որն ներառում են ալքոհոլի ձեռնպահութիւնը (ինքնազսպումը) որպէս իրենց անդամակցութեան մի պայման: Սակայն, այս բոլոր վէճերի հանդերձ այս մի բարդ խնդիր չի, քանի որ Աստուծաշունչը չի արգելում ալքոհոլի խոհեմ գործածումը, եւ իրականում ակնարկում է դրան որպէս մի օրհնութիւն Աստծուց, որը եթէ պատշաճօրէն գործածի կարող է լինել հաճելի, թերեւս ցնցելով տրամադրութիւնը (Սաղմոս 104:14-15, Երկրորդ Օրինաց 7:13, 14:26, Դատաւորաց 9:13, Նէեմիա 5:18, Ա. Տիմոթէոս 5:23): Գինի կամ ուրիշ ալքոհոլական խմիչքների խմելը մեղք չի, իսկ դրանցից թմրամոլելն կամ արբեցելն է մեղք (Ժողովող 10:17, Ա. Կորնթացիս 15:34, Գաղատացիս 5:21, Եփեսացիս 5:18, Ա. Տիմոթէոս 3:3): Աստուծաշունչը զգուշացնում է արբեցողութեան դէմ, նկարագրելով դրա հետեւանքները որպէս ինքնազսպման պակասութիւն, բռնութիւն, գլխապտոյտ, շփոթած մտածողութիւն եւ տկար դատողութիւն (Առակաց 20:1, 23:29-35; Եսայիա 28:7): Ուստի հաւատացեալներ պիտի լինեն զգոյշ եւ զանազանող ալքոհոլի գործածման նկատմամբ՝ պաշտպանելով իրենք իրենց արբեցողութիւնից:

Ծխել – Մենք լսել են սովորական փաստարկները ծխելու դէմ՝ որ պիտի զգոյշ լինենք թէ ինչ ենք դնում մեր մարմինների մէջ քանի որ նրանք Սուրբ Հոգու տաճարներն են (Ա. Կորնթացիս 6:19), որ ծխելը ունի բազմաթիւ վնասակար հետեւանքներ, եւ որ այն կարող է յառաջացնել ուժգին նիկոտինային մոլութիւն (կախումութիւն): Սրանք բոլորը վաւերական կէտեր են, սակայն հարկ է մեզ որ շատ զգոյշ լինել չկենտրոնանալ ծխելու վրայ, քանի որ դա շատ հեշտ է պախարակել, մինչ անտեսելով այլ բաներ որոնք շատ Քրիստոնեաներ, եթէ ոչ մեծաւ մասամբ, կատարում են, որոնք կարող են լինել նոյնքան վնասակար, կամ նոյնիսկ աւելի քան ծխելը (Առակաց 23:20-21): Կան շատեր որոնք ծխում են դիպլոմատաբար (հազուադէպ), եւ ծխելու մոլի չեն (կախում չեն), եւ գտնում են ծխելը որպէս հաճելի ու հանգստացնող մի բան: Թէպէտ տրամաբանական է թուում որ Քրիստոնեաներ ցանկանան խուսափել կամ թողնել ծխելը ըստ դրա տեսլ վնասակար հետեւանքները, սակայն Աստուծաշունչը չի ներկայացնում ծխելը որպէս ինքն իրանով մի մեղսալի արարք: Իւրաքանչիւր պարագայ տարբեր է, եւ իւրաքանչիւր անձ պիտի կատարի մի իմաստուն ու տեղեակ որոշում՝ լրջօրէն կշռելով ծխելու վտանգները դրա առաւելութիւնների դէմ:

Դաջուածքներ – Նրանք որոնք հակառակ են դաջուածքներին մէջբերում են Աստուծաշնչում եղած միայն համարը որը նշում է այս արարքը՝ այսինքն Ղեւտացոց 19:28ը: Ղեւտացոց 19ի ենթահողը Աստծոյ սրբութիւնն է եւ թէ ինչպէս Իսրայէլը պիտի լինէր մի սուրբ ազգ: Որոշ օրէնքները տրուել էին սովորեցնելու առանձնացման գաղափարը (համարներ 19, 23-25, 27): Այս եւ նման օրէնքները տրուել էին ջոկ պահելու Իսրայէլին իրենց շուրջը եղած Հեթանոս ազգերից: Սակայն, այդպիսի տարբերութիւնները այլեւս ի գօրու չեն այսօր, քանի որ ի Քրիստոս թէ Հրէայ եւ թէ Հեթանոս հաւատացեալները միացած են, եւ ուստի Հին Ուխտի ծիսական եւ սննդական օրէնքները վերցուել են (չեղեալ են) (Եփեսացիս 2:11-16): Ղեւտացոց 19:28ում արտայայտուած մարմնի կտրումը կամ դաջումը հեթանոսական սովորութիւններ էին: Ներկայիս դաջումի արարքը ոչ մի կապ չունի այնպիսի հեթանոսական սովորութիւնների հետ: Ուստի, մենք չենք կարողում Սուրբ Գրքում որ դաջումը բնականաբար մի մեղսալի արարք է: Սակայն, կան բազմաթիւ պատճառներ որպէսզի մտածել երկար ու լրջօրէն նախքան դաջուածք ստանալ, կամ թէ նոյնիսկ մերժել այդ, որն որոշումներ են որ անհատներ պիտի կատարեն, պահանջելով շատ իմաստութիւն եւ զանազանութիւն: